



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՏԵԴԵՐԱՑԻԱ

«ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ»

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ



ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա



Ողջույնի խոսք

Միջազգային համաժողով «Արիմիությունները խթանում են միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ բարելավված ներկայացուցչությանն ու աշխատանքային շարժմանն ինտեգրվելու միջոցով» թեմայով

Բաց դաս «Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի «Սոցիալական գործընկերությունների ժամանակակից հիմնահարցերը» դասընթացի շրջանակում

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի նախագահը Արժանապատիվ աշխատանքի օրվան ընդառաջ հյուրընկալվել էր «Կենտրոնի առավոտը» հաղորդմանը

ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի 5-րդ հանդիպում

ԵՄ-ՀՀ քաղհասարակության պլատֆորմի 5-րդ համատեղ հանդիպման շրջանակում հանդիպումներ

Աշխատանքային իրավունքի վերաբերյալ տեսահոլովակներ

Բարի գալուստ,

«Արհմիութենական անցուղարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուղարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը: Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենագորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ



Միջազգային համաժողով

«Արհմիությունները խթանում են միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ բարելավված ներկայացուցչությանն ու աշխատանքային շարժմանն ինտեգրվելու միջոցով» թեմայով



2024 թվականի հոկտեմբերի 1-3-ը Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսում տեղի ունեցավ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և «Սոլիդարումաս» Լիտվայի արհմիության կողմից կազմակերպված «Արհմիությունները խթանում են միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ բարելավված ներկայացուցչությանն ու աշխատանքային շարժմանն ինտեգրվելու միջոցով» թեմայով միջազգային համաժողովը:

Համաժողովին մասնակցում էին արհմիությունների ներկայացուցիչներ Հայաստանից, Ուկրաինայից, Բելառուսից, Լեհաստանից, Մոլդովայից, Ղազախստանից, Ուզբեկստանից և Տաջիկստանից: Համաժողովին մասնակցել են նաև ԱՄԿ փորձագետներ և Լիտվայի միգրացիայի վարչության և Լիտվայի սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության ներկայացուցիչներ:

Համաժողովը ողջունեցին և վարեցին Լիտվայի «Սոլիդարումաս» արհմիության նախագահ տիկին Քրիստինա Կրուպավիչյենեն և ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրոյի (ACTRAV/ILO) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով բաժնի ղեկավար պարոն Սերգեյուս Գլովացկասը:

Համաժողովի մասնակիցները խոսեցին իրենց երկրներում աշխատանքային միգրացիայի իրավիճակի մասին՝ քննարկելով խնդիրներն ու լուծումները:





Համաժողովի ընթացքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանը ներկայացրեց Հայաստանում միգրանտ աշխատողների իրավունքների և նրանց աշխատանքային պայմանների իրավիճակը, ինչպես նաև միգրանտ աշխատողների ներկայացուցչության և ինտեգրման գործում արհմիությունների դերը:

Համաժողովի շրջանակներում մասնակիցները այցելեցին Սեյմաս (Լիտվայի Հանրապետության խորհրդարան)՝ նրա աշխատանքներին և օրենքների ընդունման ընթացակարգին ծանոթանալու նպատակով:



Բաց դաս

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի «Սոցիալական գործընկերությունների ժամանակակից հիմնահարցերը» դասընթացի շրջանակում



2024 թվականի հոկտեմբերի 1-ին «Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական ծրագրի «Սոցիալական գործընկերությունների ժամանակակից հիմնահարցերը» դասընթացի շրջանակներում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հրավիրված էր վարելու բաց դաս: Դասի ընթացքում Է. Մանասերյանը ուսանողներին ներկայացրեց արհմիությունների դերի կարևորությունը և անդրադարձավ հանրապետությունում առկա հիմնական խնդիրներին:



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի
Նախագահը Արժանապատիվ աշխատանքի օրվան
ընդառաջ հյուրընկալվել էր
«Կենտրոնի առավոտը» հաղորդմանը



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի Նախագահ Էլեն Մանասերյանը Արժանապատիվ աշխատանքի օրվան ընդառաջ հյուրընկալվել էր «Կենտրոնի առավոտը» հաղորդմանը:

Հաղորդման ընթացքում խոսվեց հոկտեմբերի 7-ին կայանալիք աշխատանքի տոնավաճառի մասին, որը Նախաձեռնել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Արժանապատիվ աշխատանքի օրվան նվիրված:

ՀԱՄԿ-ի Նախագահը կարևորեց արժանապատիվ աշխատանքի իրական գիտակցումը, քանի որ արժանապատիվ աշխատանքը միայն աշխատավայրը չէ, ոչ պակաս կարևոր է Նաև այն միջավայրը, որտեղ մենք աշխատում ենք, կարևոր է այն հոգեվիճակը, որով մենք ներկայանում ենք աշխատանքի, կարևոր են առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները:

Այս ամենի մասին առավել մանրամասն դիտեք տեսանյութում <https://shorturl.at/ilQsv>

Աշխատանքի տոնավաճառ
և
«Արհմիությունը մենք ենք» ֆիլմի ցուցադրություն



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Արժանապատիվ աշխատանքի օրվան նվիրված կազմակերպել էր աշխատանքի տոնավաճառ և «Արհմիությունը մենք ենք» ֆիլմի ցուցադրություն:

Կարևորելով Հայաստանում արժանապատիվ աշխատանքի օրեցօր աճող անհրաժեշտությունը՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան նպատակ ունի ևս մեկ անգամ հանրության ուշադրությունը հրավիրել արժանապատիվ աշխատանքային միջավայրի ձևավորման առաջնահերթությանը:

Աշխատանքի տոնավաճառին մասնակցում էին ավելի քան 20 գործատու կազմակերպություններ, որոնք ներկայացնում էին իրենց թափուր աշխատատեղերը, իսկ աշխատանք փնտրողների թիվը հարյուրից ավելի էր:

Միջոցառման տեսանյութը կարող եք դիտել հետևյալ հղումով <https://t.ly/Mpwhk>



«Արհմիությունը մենք ենք» ֆիլմը նվիրվում է արհմիութենական շարժման բոլոր մասնակիցներին, որոնց շնորհիվ այսօր աշխատողներն ունեն վճարովի արձակուրդի, անաշխատունակության նպաստի, երեխայի խնամքի, ամենաբարձր հանգստի և ամենամյա արձակուրդի ու այլ իրավունքներ, որոնք ձեռք են բերվել աշխատողների ավելի քան մեկ դար տևած անձնվեր պայքարի արդյունքում:

«Արհմիությունը մենք ենք» ֆիլմը կարող եք դիտել հետևյալ հղումով <https://t.ly/MdDJS>



ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի 5-րդ հանդիպում

2024թ. հոկտեմբերի 15-ին Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում տեղի է ունեցել ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի 5-րդ հանդիպումը: Հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հռչակագիր:



ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ

5-րդ նիստի

ՀԱՄԱՏԵՂ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

Բրյուսել 2024, հոկտեմբեր 15



ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմը (ԵՄ-Հայաստան ԶՀՊ) Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ստեղծված մարմիններից մեկն է: Այն թույլ է տալիս երկու կողմերի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ԶՀԿ) մշտադիտարկել ՀԸԳՀ-ի կատարման գործընթացը և առաջարկություններ մշակել համապատասխան մարմինների համար:

ՀԸԳՀ-ի կիրարկման և ընդհանրապես՝ ԵՄ—Հայաստան հարաբերությունների առաջընթացի վերաբերյալ, ԵՄ—Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմը (ԶՀՊ).

1. Ողջունում է Եվրամիության և Հայաստանի միջև վիզային ռեժիմի ազատականացման շուրջ 2024թ. սեպտեմբերի 9-ին հայտարարված երկխոսության մեկնարկը: Մինևույն ժամանակ, կոչ է անում Հայաստանի իշխանություններին հետևողական ջանքեր գործադրել ԵՄ առանցքային չափանիշներին համապատասխանելու համար, ինչը որոշիչ նշանակություն ունի՝ ՀՀ քաղաքացիների՝ ապագայում առանց վիզային ռեժիմի Եվրամիություն մուտքի համար, մասնավորապես՝ փաստաթղթերի անվտանգության, սահմանների եւ միգրացիոն հոսքերի կառավարման, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաեւ հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերը:



2. Ողջունում է Հայաստանի խորհրդարանի կողմից EUROJUST-ի հետ րամագործակցության համաձայնագրի արագ վավերացումը և EUROJUST-ի, Վրդարադատության նախարարության ու Գլխավոր դատախազության միջև սշխատանքային կարգերի ստորագրումը, ինչը նշանավորում է ԵՄ-ի հետ քրեական րործերով առավել սերտ համագործակցության մեկնարկը, կոչ է անում Հայաստանի րխանություններին այս կարևոր կառույցի հետ կապերի հարցով դատախազի սշանակման մրցութային գործընթաց անցկացնել:

3. Բարձր է գնահատում ԵՄ դիտորդական առաքելության վճռորոշ յերակատարությունը Հայաստանի անվտանգության ապահովման եւ Հայաստանի տարածքների դեմ ադրբեջանական հարձակումների քանակի նվազեցման հարցում, կոչ է անում ԵՄ-ին 2025թ. հետո երկարաձգել առաքելության մանդատը. ողջունում է սվրոպական խորհրդի կողմից Եվրոպական խաղաղության գործիքակազմի շրջանակներում Հայաստանին աջակցելու վերաբերյալ որոշման կայացումը, ինչպես նաև Հայաստանի պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված այլ երկկողմ ախաձեռնությունները:

4. Ողջունում է Հայաստանի և ԵՄ-ի միջև համագործակցության նոր րակարգի շուրջ բանակցությունները. միևնույն ժամանակ, ընդգծում է ջաղաքացիական հասարակության, ներառյալ՝ ԵՄ-ՀՀ քաղհասարակության պատֆորմի հետ թափանցիկ և ներառական խորհրդակցությունների գործընթացի յարևորությունը վերջնական փաստաթղթի ստորագրումից առաջ համոզված լինելու րամար, որ քաղաքացիական հասարակության առաջարկությունները հաշվի են առնվում:

5. Կրկնում է, որ գործընթացում ներգրավված քաղաքացիական րասարակության դերակատարների համար ՀԸԳՀ-ն ոչ միայն երկու գործընկերների լիջև ստորագրված շրջանակային համաձայնագիր է, այլև առաջին հերթին Հայաստանն իրական ժողովրդավարության վերածելու և նրան դեպի ԵՄ սնդամակցություն տանելու խթան:

6. Մատնանշում է, որ ՀԸԳՀ-ի կիրարկման հարցում ԵՄ-Հայաստան ջաղաքացիական հասարակության պլատֆորմի առաջնային գործառույթները սորհրդատվության և ոլորտային փորձաքննությունների միջոցով գործընթացին ապաստելն է, ինչպես նաև հետևողական և համակարգված մոնիթորինգային ջանքերի ապահովումը՝ ՀԸԳՀ շրջանակներում ՀՀ պարտավորությունների թափանցիկ եւ րաշվետու իրականացման համար:



7. Մատնանշում է, որ ՀԸԳՀ-ի վերաբերյալ խորհրդատվության շարունակության, ՀՀ կառավարության կողմից ՀԸԳՀ-ի իրականացման, Հայաստանի և ԵՄ-ի միջև համագործակցության օրակարգի առաջարկվող արդիականացման մշտադիտարկման համար ԵՄ-ՀՀ ԸՀԴ-ին անհրաժեշտ կլինի շարունակական աջակցություն, այդ թվում՝ Եվրոպական հանձնաժողովի և Հայաստանի կառավարության կողմից ուղղակի ֆինանսավորման միջոցով:

8. Վերահաստատում է իր դիրքորոշումը ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի թարմացման անհրաժեշտության վերաբերյալ և կոչ է անում Հայաստանի կառավարությանը դա անել քաղաքացիական հասարակության, ներառյալ ԵՄ-ՀՀ ԸՀԴ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ նորացված ծրագրում քաղաքացիական հասարակության առաջարկությունները ներառելու նպատակով:

9. Բարձր է գնահատում Հռոմի կանոնադրությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ ՀՀ իշխանությունների ձեռնարկած քայլերը. միևնույն ժամանակ, կոչ է անում Հայաստանի կառավարությանը ակտիվացնել ջանքերը Միջազգային քրեական դատարանի հետ համագործակցության ուղղությամբ:

10. Ընդգծում է Երևանի ավագանու՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրված անդամներին իրենց լիազորությունները կատարելու հնարավորություն տալու կարևորությունը:

11. Վերահաստատում է համապարփակ դատական և իրավական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, ներառյալ՝ դատախազության և իրավապահ մարմիններում, կոչ է անում իշխանություններին միջոցներ ձեռնարկել թույլ չտալու, որպեսզի դատավորները և նրանց հետ փոխկապակցված անձինք շարունակեն զբաղեցնել ոչ դատավոր անդամների տեղերը գործող դատական հանձնաժողովներում, կանխել Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրովի նշանակումների և ընտրովի արդարադատության շարունակական դեպքերը, ինչպես նաև պատշաճ կերպով հաշվի առնել դատավորների նշանակումների գործընթացում բարեվարքության ստուգման բացասական եզրակացությունները:

12. Միջազգային գործընկերներին կոչ է անում խստորեն դատապարտել այն դեպքերը, երբ ՀԼՄ-ներն ու արտաքին ուժերի կողմից վերահսկվող այլ դերակատարներ թիրախավորում են Հայաստանի Սահմանադրական դատարանի դատավորներին՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու համար.



13. Ընդգծում է կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանի կառավարության գործադրած ջանքերը, սակայն մտահոգություն է հայտնում մի շարք չլուծված ինստիտուցիոնալ խնդիրների կապակցությամբ. մասնավորապես, ընդգծում է հակակոռուպցիոն մարմինների անկախությունն ապահովելու, դրանց ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստելու և նրանց կարողությունների մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը.

14. Անհանգստությամբ մատնանշում է ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման պրակտիկան և ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների արդյունավետ քննության բացակայությունը.

15. Դատապարտում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում աննախադեպ փոփոխությունների նախագիծը, որի նպատակն ամբողջ երկրում պետական զանգվածային տեսահսկողություն ներդնելն է, և խորապես ափսոսում է, որ այս նախագիծն արդեն ընդունվել է խորհրդարանական առաջին ընթերցմամբ՝ առանց պատշաճ հանրային քննարկումների և հանրային իրազեկման քարոզարշավների. նշում է, որ նման օրենսդրության ներդրումը պահանջում է լայն հանրային քննարկում և անձնական տվյալների պաշտպանության ամուր շրջանակ:

16. Ափսոսանքով նշում է, որ չնայած ՀՀ Աշխատանքային օրենսգրքում որոշակի բարելավումներին, վերջին երկու տարիների ընթացքում քիչ առաջընթաց է գրանցվել ընդհանուր սոցիալական և զբաղվածության բարեփոխումների ոլորտում՝ ի հեճուկս ԵՄ-ՀՀԶՀԴ-ի խորհրդատվական կարծիքների և համատեղ հայտարարությունների, ինչը ցույց է տալիս, որ դրանք բավարար արձագանք չեն ստացել քաղաքականություն մշակողների շրջանում. ևս մեկ անգամ կոչ է անում Հայաստանի կառավարությանը զարգացնել սոցիալական երկխոսությունը և գործնական քայլեր ձեռնարկել կոլեկտիվ բանակցությունները և սոցիալական գործընկերների միջև խորհրդակցությունները բոլոր մակարդակներում վերաինստիտուցիոնալացնելու, ինչպես նաև առողջ ու անվտանգ աշխատանքի ոլորտում երկար սպասված բարեփոխումների մեկնարկելու նպատակով՝ դրանց համար հստակ վերջնաժամկետներ սահմանելով:

17. Վերահաստատում է Հայաստանի կողմից «Առողջ և անվտանգ աշխատանքի մասին» թիվ 155 և «Առողջ և անվտանգ աշխատանքի զարգացման օրենսդրական շրջանակի մասին» թիվ 187 կոնվենցիաները՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) չափանիշներին համապատասխան վավերացնելու և ներդնելու հրատապ անհրաժեշտությունը, ինչպես նաև կոչ է անում ամբողջությամբ ներդնել «Աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիան՝ հաշվի առնելով



վերջին 18 տարիների ընթացքում աշխատանքային միջազգային նորմերի ընդունման բացակայությունը:

18. Կոչ է անում Հայաստանի կառավարությանը բարեփոխել գործող օրենսդրական դաշտը, որպեսզի ուժեղացնի աշխատանքի տեսչական մարմին՝ աշխատանքային օրենսդրության հանդեպ արդյունավետ հսկողություն ապահովելու համար, հատկապես՝ չգրանցված զբաղվածության, միավորումների ազատության և կոլեկտիվ բանակցությունների, վարձատրության սահմանման և դրա պաշտպանության, ինչպես նաև առողջ և անվտանգ աշխատանքի համատեքստերում:

19. Նշում է, որ օտարերկրյա աշխատուժի կազմակերպված փոխադրումը և ոչ կանոնավոր միգրանտների հաճախակի հարկադիր ներգրավումը ապօրինի և վտանգավոր աշխատանքներում դեռևս շարունակում է տեղի է ունենալ, որոշ դեպքերում նաև թրաֆիքինգի դրսևորումով. նշում է նաև, որ իշխանությունների կողմից այս երևույթի դեմ ձեռնարկվող միջոցառումները դեռևս տեսանելի արդյունքների չեն բերել. հաստատում է ոչֆորմալ տնտեսության ֆորմալացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու, անբարեխիղճ տնտեսավարողների կողմից չգրանցված աշխատանքի պրակտիկան դադարեցնելու և թրաֆիքինգով զբաղվող անձանց պատասխանատվության ենթարկելու ծայրաստիճան կարևորությունը:

20. Բարձր է գնահատում ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված օրենսդրության զգալի բարելավումները: Այնուամենայնիվ, հիշեցնում է նաև աշխատանքային միջավայրում ոտնձգությունների և բռնության կանխարգելման կարևորությունը. կոչ է անում վավերացնել և ներդնել ԱՄԿ «Բռնության և ոտնձգությունների մասին» թիվ 190 կոնվենցիան:

21. Նշում է, որ «կյանքի ծախսերի» (cost-of-living) ճգնաժամի պայմաններում սոցիալական արդարության բաղադրիչը Հայաստանի քաղաքականության մեջ մնում է ցածր. վերահաստատում է սոցիալական պաշտպանության համակարգերի, գործազրկության նպաստների և կենսաթոշակների բարելավման, ադեկվատ նվազագույն աշխատավարձի ներդրման, աճող անհավասարության և սոցիալական լարվածության պայմաններում վարձատրության ինդեքսավորման քաղաքականության ներդրման օրհասականությունը՝ հանրության դիմակայությունը պաշտպանելու համար: Միևնույն ժամանակ, կոչ է անում ԵՄ-ին տրամադրել տեխնիկական աջակցություն այս բարեփոխումների համար:



22. Ողջունում է Հայաստանի կառավարության՝ առաջիկա տարիներին առողջության համապարփակ ապահովագրության ներդրման ծրագիրը, սակայն շեշտում է գործընթացը թափանցիկ պահելու և աշխատողների հետ պատշաճ խորհրդակցելու հրատապ անհրաժեշտությունը, քանի որ աշխատողներն են լինելու այդ ապահովագրության հիմնական ֆինանսավորողները:

23. Կոչ է անում ԵՄ-ին ներազդել Ադրբեջանի վրա դիվանագիտական լծակներով՝ Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքները հարգելու եւ նրանց անվտանգությունը երաշխավորելու, իրավունքների հարգումը լիովին ապահովելու ու Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգությունը երաշխավորելու համար (ներառյալ միջազգային վերահսկողության ներքո նրանց՝ իրենց տները վերադառնալու և այնտեղ ապրելու, ինչպես նաև իրենց հողին եւ գույքին հասանելիություն ունենալու իրավունքը), ինչպես նաև համաձայն Եվրոպական խորհրդարանի RC-B9-0163/2024 բանաձևի՝ ազատ արձակել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի բոլոր բնակիչներին, ովքեր շարունակում են մնալ ադրբեջանական կալանքի տակ:

24. Բարձր է գնահատում ԵՄ-ի և նրա անդամ պետությունների կողմից Հայաստանին և նրա քաղաքացիական հասարակությանը տրամադրված ֆինանսական աջակցությունը՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայ բնակչության համար և ընդգծում է այդ աջակցության ավելացման անհրաժեշտությունը՝ կանխելու համար արտաքին ուժերի կողմից դժգոհություններն օգտագործելով, այդ թվում՝ հակասահմանադրական միջոցներով, քաղաքական միջամտության իրականացումը:

25. Վերահաստատում է, որ երկրում ժողովրդավարության արդյունավետ և կայուն զարգացումն ու ներդրումը հնարավոր է միայն խաղաղության, անվտանգության և կայունության պայմաններում: Այս առումով նշում է, որ անհրաժեշտ է ավելացնել ճնշումն ու դիվանագիտական ազդեցությունն Ադրբեջանի վրա՝ վերջինիս զերծ պահելու Հայաստանի դեմ ապագա ռազմական ագրեսիայից և այդ երկրում ռազմական ցանկացած հռետորաբանությունից:



ԵՄ-ՀՀ քաղիասարակության պլատֆորմի 5-րդ համատեղ հանդիպման շրջանակում հանդիպումներ

ԵՄ-ՀՀ քաղիասարակության պլատֆորմի 5-րդ համատեղ հանդիպման շրջանակում տեղի են ունեցել նաև հանդիպումներ Եվրոպական հանձնաժողովի Հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Դեյվիդ Քալլենի, Եվրախորհրդարանի պատգամավոր Պյետրաս Առատրեվիչուսի խորհրդական Դովիլե Սուկիտեի, Եվրախորհրդարանի Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցով պատվիրակության փոխնախագահ Նատալի Լուազոյի հետ:



Աշխատանքային իրավունքի վերաբերյալ տեսահոլովակներ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության համագործակցության շրջանակներում հրապարակվել են աշխատանքային հարաբերությունների ծագման, աշխատանքային պայմանագրում պարտադիր կետերի, աշխատանքային իրավունքների վերաբերյալ հաճախ տրվող հարցերի վերաբերյալ տեսահոլովակներ:



Աշխատանքային հարաբերությունների ծագման վերաբերյալ տեսահոլովակը կարող եք դիտել հետևյալ հղումով <https://t.ly/dfdYS>



Աշխատանքային պայմանագրում պարտադիր կետերի վերաբերյալ տեսահոլովակը կարող եք դիտել հետևյալ հղումով https://t.ly/Z6_ON



Աշխատանքային իրավունքների վերաբերյալ հաճախ տրվող հարցերի վերաբերյալ տեսահոլովակը կարող եք դիտել հետևյալ հղումով <https://t.ly/5pVDw>





Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3

Հեռ.՝ +37410 583682

www.hamk.am

hamk@hamk.am